

## Հարգելի Մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը: «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի հրավերում մանրամասն նկարագրված և սահմանված են մասնակցության պարտադիր և ոչ պարտադիր պայմանները, գնահատման կարգը, ինչպես նաև հայտը պատրաստելու և ներկայացնելու կարգը: Համաձայն «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» մրցույթի հրավերի ՄԱՍ I-ի 5-րդ կետի, Ձեզ ենք ներկայացնում հետևյալ պարզաբանումը.

### Պարզաբանում

#### Հարց 1

Ոչ գնային առաջարկի <<Գնահատման Բալային Համակարգի>> կշռային չափանիշների A/ կետում մատնանշված՝ ստացված մրցանակների և որակի սերտիֆիկատների առկայությունը, պարտադիր պետք է և մրցանակների և որակի սերտիֆիկատների առկայությունը, որպեսզի ստանանք 5 բալ թե երկուսից մեկը բավարար է:

#### Պատասխան

A չափանիշի 3-րդ ենթաչափանիշի առավելագույն հնարավոր ստացված բալերի քանակն է՝ 5 բալը, որի գնահատականը կարող է տրվել գնահատող հանձնաժողովի կողմից միայն հայտով ներկայացված պահանջվող մրցանակների և սերտիֆիկատների ուսումնասիրությունից հետո:

#### Հարց 2

Կշռային չափանիշների A/ կետում մատնանշված որակի սերտիֆիկատը նույն բաժնի E/ կետը, որը նույնպես տրամադրում է 5 բալ ևս վերաբերում է սերտիֆիկատի առկայությանը: Հարց՝ հետևաբար կարող ենք կարծել, որ նույն սերտիֆիկատի համար մասնակիցը կարող է ստանալ ընդհանուր 10 բալ, արդյոք անհրաժեշտ է և ISO և HACCP սերտիֆիկատների առկայությունը թե կարող է լինել երկուսից մեկը:

#### Պատասխան

Այս չափանիշը վերաբերվում է կոնկրետ սերտիֆիկատների առկայությանը, որի գնահատականը կարող է տրվել գնահատող հանձնաժողովի կողմից միայն պահանջվող մրցանակների և սերտիֆիկատների ուսումնասիրությունից հետո: Մասնակցին տարբեր չափանիշներով ներկայացված նույն գործունեության նույն սերտիֆիկատի համար չի կարող շինորիվել բալերի կրկնակի քանակ: Գնահատվելու է ոչ միայն սերտիֆիկատների կամ մրացանակների առկայությունը, այլ նրանց համապատասխանությունը, ժամկետները և այլն: Գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված ISO և HACCP սերտիֆիկատների միասնական առկայության համար կշինորվի առավելագույն բալերի քանակ /երկուսից մեկը լինել չի կարող, որովհետև երկրորդը՝ առաջինի շարունակությունն է/:

### **Հարց 3-րդ**

В չափանիշը, որը վերաբերվում է մենյուին, խնդրում եմ հստակեցնել գնահատման ձևը, հատկապես այս բանաձևի «(տեսականու անվանում + որակ + չափաբաժին) / գնային քաղաքականություն» հաշվարկը: Քանի որ տեսականու անվանում + որակ + չափաբաժին ունեն լրիվ տարբեր չափման միավորներ և ինչ ցուցանիշներով է որոշելու որակը:

Պատասխան

(Տեսականու անվանում + որակ + չափաբաժին) / գնային քաղաքականություն) դա բանաձև չէ, այլ միմյանց համապատասխանության հարաբերակցություն:

Յուրաքանչյուր տողի համար առաջարկվող տեսականին, նրա համար առաջարկվող որակը և մատուցման համար ներկայացված չափաբաժինը պետք է համապատասխանեն միմյանց, ինչպես նաև համապատասխանեն դրանց համար ներկայացված գնային առաջարկին, օրինակ՝ 0,33 լ. տարողությամբ 1 շիշ Կոկա Կոլաի արժեքը չի կարող սահմանվել 1000 ՀՀ դրամ:

Որակի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկված է բարձրակարգ խոհարար և գնահատող հանձնաժողովի որոշմամբ առանձին տողերի համար մասնակցից կարող են պահանջվել լրացուցիչ տվյալներ պատրաստվող ուտեստի բաղադրամասերի վերաբերյալ:

Եթե հայտի համապատասխան հավելվածում բացակայում է ուտեստների և ըմպելիքների ուսանողների համար անհրաժեշտ որևէ տեսականի, ապա տվյալ տողը ենթակա է շտկման /լրացման/ մասնակցի կողմից, սակայն այդ՝ հայտով չլրացված տողի համար մասնակիցը կստանա 5 բալ, իսկ տողերի քանակի հաշվառվել կկատարվի լրացումից հետո:

В չափանիշը գնահատվում է գնահատող հանձնաժողովի կողմից ուսանողին որակյալ և հնարավորինս մատճելի, սակայն որակին համապատասխանող սնունդով ապահովելու սկզբունքով:

### **Հարց 4-րդ**

С չափանիշ: Եթե տրամադրվող սարքավորումները բավարար են մեր մենյուի սպասարկման համար և մեր կողմից լրացուցիչ տեխնիկական միջոցների տրամադրելու կարիք չկա, այդ դեպքում տրվում է 15 բալ, թե ոչ: Եթե ոչ խնդրում ենք ավելի կոնկրետ պարզաբանել С չափանիշը:

Պատասխան

Մասնակցի ներկայացված մենյուն ինքն իրեն գնահատող հանձնաժողովի կողմից կարող է գնահատվել բավարար, կամ ոչ բավարար, իսկ լրացուցիչ տեխնիկական միջոցների տրամադրման կարիքը հստակ սահմանված է հրավերով:

Բոլոր չափանիշները գնահատվում են մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից, այլ ոչ թե մասնակցի կողմից չափանիշների կարիքի անհրաժեշտության որոշման սկզբունքով:

## Հարց 5-րդ

Ոչ գնային առաջարկի <<Գնահատման Բալային Համակարգի>> կշռային չափանիշների F/ կետում մատնանշված է սննդի արտադրության թույլտվություն 5 բալ: Ցանկանում եմ հայտնել, որ ըստ ՀՀ ՍԱՊԾ-ի հայտնած տեղեկատվության ՀՀ-ում նման թույլտվություն գոյություն չունի: Հետևաբար խնդրում եմ հայտնել, թե ինչթույլտվության մասին է խոսքը, եթե հնարավոր է ներկայացնել սննդի արտադրության օրինակ, որի արդյունքում հնարավոր կլինի ստանալ 5 բալ:

Պատասխան

Ոչ հանրային սննդի մատուցման, այլ սննդի արտադրության սերտիֆիկատ՝ օրինակ EAC և այլն:

- 
- Խնդրում են հստակեցնել հայտերի հանձման վերջնաժամկետը և հայտերի բացման կոնկրետ տեղը, օրը և ժամը

Պատասխան

Հայտերի հանձման վերջնաժամկետը, հայտերի բացման վայրը, օրը և ժամը սահմանված են մրցույթի հայտարարությամբ: Փոփոխության դեպքում դրա մասին կհրապարակվի նոր հայտարարություն ոչ ուշ քան 10.10.2018թ. ներառյալ:

- Խնդրում եմ հայտնել, երբ կարող ենք այցելել և ուսումնասիրել վարձակալությամբ տրվող տարածքը և շարժական գույքը:

Պատասխան

Հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

---

*Հաշվի առնելով մասնակցի պարզաբանման պահանջի բովանդակությունը, հայտնում ենք որ անցկացվող մրցույթի նպատակն է՝ ուսանողներին որակյալ սնունդով ապահովումը: Հայտերը գնահատվելու են մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերով սահմանված կարգով: Բոլոր մասնակիցների հայտերը գնահատվելու են նույն սկզբունքով:*